

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2019-2023

ԵՐԵՎԱՆ 2019

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սույն ռազմավարական ծրագիրն ուղղազծում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի 2019 - 2023 թթ. գործունեության հիմնարար ուղղությունները՝ ելակետ ունենալով հաստատության հեռանկարը: Ծրագրում համակցված են Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԿՄԿ կամ Կենտրոն) գործունեության ավանդական և նոր մոտեցումները՝ ի նպաստ մրցունակ բազմառոտային մասնագիտական և ուսումնահետազոտական կրթության, անհատի և հասարակության առաջընթացի: Ծրագիրը մշակվել է ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանումների գործուն մասնակցությամբ՝ հաշվի առնելով ակադեմիական բազմառոտային մասնագիտական և ուսումնահետազոտական կրթության արդի հիմնահարցերի և գործընթացների, Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցների դաշտի, Կենտրոնի կարողությունների և գործունեության միջավայրի վերլուծության արդյունքները: Փաստաթղթում սահմանված են ԳԿՄԿ-ի հայեցակարգային մոտեցումները, որոնք կողմնորոշելու են նրա առաջիկա գործունեությունը և հավակնությունները կրթական, գիտական, հետազոտական և սոցիալական պատասխանատվության ուղղություններով: Տրված հայեցակարգային շրջանակները հիմք են լինելու գործողությունների պլանի մշակման և ռազմավարական ծրագրի իրականացման, վերահսկման և գնահատման համար՝ հետևյալ ինստիտուցիոնալ ուղղություններով. ուսումնական և հետազոտական գործընթաց, հառավար ուսուցում, ուսանողական համակազմ, պրոֆեսորադասախոսական կազմ, գիտական և հետազոտական գործունեություն, միջազգայնացում, ֆինանսատնտեսական գործունեություն և նյութատեխնիկական հենք, տեղեկատվական տեխնոլոգիաներ, կառավարում, կրթության որակ, հակակոռուպցիոն ծրագրեր, սոցիալական պատասխանատվություն: Ծրագրի իրագործման ընթացքը ուղեկցվելու է Գիտակրթական միջազգային կենտրոնի ձեռքբերումների, ներքին և արտաքին միջավայրի փոփոխությունների և գնահատմամբ: Այն թույլ կտա քայլել ժամանակին համընթաց և նախաձեռնողական լինել նոր մարտահրավերներին ընդառաջ:

Հաշվի առնելով կրթությանը ներկայացվող ժամանակակից պահանջները և պարբերաբար ձգտելով կրթության ոլորտում նորարարությունների ներդրման՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն 2014 թ-ից իրականացնում է նաև հեռավար դասընթացներ, որոնց շրջանակներում հասարակական որոշակի խմբեր (շրջանավարտներ, գործազուրկներ, տնային տնտեսուհիներ, հատուկ կարիքներ ունեցող անձինք և այլք) հեռավար ձևով վերապատրաստվելու հնարավորություն ձեռք բերեցին: Այս փորձը ցույց տվեց, որ հասարակության շրջանում շատ մեծ է հետաքրքրությունն առցանց դասընթացների նկատմամբ, որը շարունակական կրթության լավագույն մոդելն է:

Գ Ի Տ Ա Կ Բ Ա Կ Ա Ն Մ Ի Ջ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ի
2019-2023 թթ. Ռ Ա Ջ Մ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ր Ի
Հ Ի Մ Ք Ո Ւ Մ Ը Ն Կ Ա Ծ Հ Ի Մ Ն Ա Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ի Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական պլանավորման գործընթացի իրականացման դրդապատճառների հիմքում առկա են հետևյալ հիմնախնդիրները՝

- Բարձրագույն կրթության և հետազոտական ոլորտի աճող և փոփոխվող պահանջարկը, աճող և գլոբալացող մրցակցությունը, ինչը Գիտակրթական միջազգային կենտրոնից՝ իբրև հետազոտական ուսումնական հաստատության նախատիպ՝ պահանջում է գնահատել, համադրել և անընդհատ մեծացնել իր մրցակցային առավելություններն ու ներուժը:

- ՀՀ ԳԱԱ համակարգի մտավոր, գիտամանկավարժական, նորարարական ներուժի, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունների կիրառմամբ երիտասարդ կադրերի գիտահետազոտական գործունեության իրականացում և գիտական հասարակության ներգրավում:

- Տնտեսության նորարարական վերափոխումները և վերակողմնորոշումը դեպի գիտահենք, բարձր տեխնոլոգիական բնագավառները էապես փոխել են բուհերի կողմից պատրաստվող մասնագիտական և հետազոտական աշխատուժի նկատմամբ որակական պահանջները:

- Գիտության առջև ծառայած նոր խնդիրները, որոնք նոր մտածողությամբ կադրեր են պահանջում, աշխարհի գիտական զարգացման գործընթացից դուրս չմնալու, 21-րդ դարում մրցունակ գիտական կադրեր պատրաստելու միտումը, Գիտակրթական միջազգային կենտրոնից պահանջում է ներդնել և արդյունավետորեն իրականացնել ուսուցման և դասավանդման ժամանակակից ձևեր և մեթոդներ անմիջապես Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում, որի շնորհիվ լավագույնս կօգտագործվի ԳԱԱ մտավոր, գիտամանկավարժական ներուժը, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունները:

- Բոլոնիայի գործընթացին համապատասխան ուսանողակենտրոն մոդելների երևան գալը, հասարակական կրթական պահանջմունքների, աշխատաշուկայի կարիքների և Կենտրոնի կրթական առաջարկի միջև խորացող ճեղքվածքը, գործոններ, որոնց առկայությունը պահանջում է Կենտրոնի վերափոխում:

- Պետական ոչ բավարար ֆինանսավորումը, որը Կենտրոնից պահանջում է դառնալ ավելի նախաձեռնող և ձեռներեց՝ աճող ֆինանսական սղաճը այլ աղբյուրներից լրացնելու համար:

- Հասարակական խավերի անհավասարության մեղմացման գործում բարձրագույն կրթության դերակատարության հրամայականը:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը, իբրև հետազոտական ուսումնական հաստատության նախատիպ, ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և ուսումնահետազոտական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական ու հետազոտական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ հետազոտական բաղադրիչի շեշտադրմամբ, նպաստելով անհատի շարունակական զարգացմանը, հետազոտական կարողությունների ձեռքբերմանը՝

գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը և փոխշաղկապվածությունը:

Գիտակրթական միջազգային կենտրոնը, լինելով ՀՀ ԳԱԱ համակարգի կառուցվածքային միավորներից մեկը, ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների հետ համագործակցում է հորիզոնական կապերով, որոնք իրականացվում են Կենտրոնի մասնագիտական ամբիոնների տեղադրումով Գիտությունների ազգային ակադեմիայի համապատասխան գիտահետազոտական կազմակերպություններում, որտեղ դասավանդում են գործող գիտնականները: Մագիստրոսների պատրաստումը այսպիսի միջավայրում թույլ է տալիս մագիստրանտներին հնարավորինս արագ ինտեգրվել գիտական հասարակայնությանը և ձեռք բերել գիտական մտածողություն: Կրթության և գիտության մերձեցմանն ուղղված այս քայլերը նպաստում են նաև ակադեմիական համակարգի գիտական կադրերի երիտասարդացմանը:

ԳԿՄԿ-ում կրթությունը կազմակերպվում է բացառապես բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ աստիճանների կրթական ծրագրերով: Այսօր Կենտրոնում ուսուցանում և հետազոտական աշխատանք են իրականացնում 700-ից ավել մագիստրանտներ և 350-ից ավել ասպիրանտներ և հայցորդներ:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ Ա Ռ Ա Ք Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

- Գիտության, կրթության և տնտեսության արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստում ու վերապատրաստում՝ նորարարական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ.

- Կենտրոնի հետազոտական հնարավորությունների զարգացում ու գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խթանում.

- կրթության միջազգայնացում ու մրցունակության ապահովում.

- ուսուցման, գիտական հետազոտությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում նորարարությունների ներմուծում.

- ակտիվ քաղաքացիական, հասարակական կյանքի բարելավմանն ուղղված գիտակրթական գործընթացի իրականացում, մասնագիտական առաջխաղացում ու հարատև ուսումնառություն.

- գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան մագիստրոսների և ասպիրանտների պատրաստում, այդ թվում՝ նաև հեռավար ուսուցման ձևաչափով:

ԿԵՆՏՐՈՆ Ի ՏԵՍԼԱԿԱՆ Ը

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը ձգտում է դառնալ հաստատություն,

- որը միտված է շարունակաբար ՀՀ ԳԱԱ գիտական հասարակության և ակադեմիական գիտահետազոտական ինստիտուտների հետ սերտ կապեր պահպանելուն, ակադեմիական համակարգի ինստիտուտներում նոր ամբիոններ ստեղծելուն,

- որը կնպաստի ակադեմիայի համակարգում երիտասարդ գիտական կադրերի համալրմանը,
- որն էական դերակատարություն ունի տնտեսական զարգացման ազգային ու տարածաշրջանային նորարարական ծրագրերում,
- որն մագիստրոսներին պատրաստում է լիարժեք ինքնադրսևորման, մասնագիտական առաջընթացի և կարիերայի համար,
- որն ապահովում է առաջնակարգ կրթություն դասախոսների ու սովորողների արդյունավետ համագործակցության միջոցով,
- որը շարունակելու է նպաստել իր մագիստրոսների և ասպիրանտների արագ ինտեգրմանը գիտական հասարակություն,
- որն արձագանքող է հասարակության կարիքներին իր գիտակրթական, գիտահետազոտական գործունեությամբ և հանրությանը մատուցվող ծառայություններով,
- որն իր մագիստրոսներին առաջարկում է համակողմանի գիտելիքներ և հմտություններ ապահովող գիտակրթական ծրագրեր՝ խարսխված ավանդված լավ փորձի, առաջավոր հետազոտության, ստեղծագործ աշխատանքի և նորարարության վրա,
- որը հասանելի է հատկապես գիտության ուղի ուղք դրած երիտասարդների համար և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- որի կրթական ծրագրերը համապատասխանում են Բոլոնիայի գործընթացի և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին,
- որը ձգտում է իր մագիստրոսներին և դասախոսներին տրամադրել բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ, տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,
- որը փորձում է իր անվանը համահունչ միջազգային և ներպետական պայմանագրեր կնքել՝ իր մագիստրոսների շարունակական կրթությունն ու շարժունակության հնարավորությունն ապահովելու նպատակով,
- որտեղ մագիստրոսների և աշխատակիցների համակողմանի զարգացումը կարևորվում է համալսարանի ուսումնական, սոցիալական, մշակութային և մասնագիտական կյանքում,
- որը հավակնում է դառնալ գիտակրթական միջազգային բացառիկ կենտրոն՝ ներգրավելով ինչպես հայազգի, այնպես էլ օտարերկրյա պետությունների քաղաքացիների մագիստրոսների և դասախոսների.
- որը միտված է շարունակաբար զարգացնելու համագործակցային կապերը արտասահմանյան առաջատար բուհերի և գիտակրթական կենտրոնների հետ,
- որը ՀՀ ԳԱԱ-ի ռեսուրսային հնարավորությունների օգտագործմամբ անընդհատ կզարգացնի ու կկատարելագործի իր գիտակրթական ներուժը,
- որը ՀՀ ԳԱԱ-ի վարկանիշին և հեղինակությանը համահունչ կայուն և հաստատուն քայլերով առավելապես ընդլայնելու է իր միջազգային ճանաչումն ու համբավը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Կրթական
- ✓ Գիտական-հետազոտական
- ✓ Ծառայություններ հասարակությանը

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գործունեության հիմքում ընկած են հետևյալ հիմնարար արժեքները՝

1. Կրթության բարձր որակը
2. Ակադեմիական ազատությունը
3. Թափանցիկությունը
4. Խոսքի ազատությունը
5. Արժանապատվությունը
6. Սկզբունքայնությունը
7. Արդարությունը
8. Պատասխանատվությունը
9. Հաշվետվողականությունը

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բարձրորակ կրթություն և հետազոտություններ,
- հանրային ներգրավվածություն և ծառայություններ,
- որակյալ կադրային ներուժ,
- արդիական ենթակառուցվածքներ,
- ընդունելության բազմազանեցված մուտք՝ պետության պահանջներին և ընդունված պետական չափանիշներին համապատասխան,
- գիտական և նորարարական գործունեություն,
- արտաքին կապեր և միջազգայնացում,
- մտավոր գործունեություն և առաջանցիկ կրթափորձի տարածում,
- ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում,
- ռազմավարական գործակցություն:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Կրթության ձևի և բովանդակության շարունակական ու միասնական արդիականացում և համալրում,
- կրթության որակի ապահովում,
- կրթական, գիտական ու հետազոտական գործընթացների առաջընթաց, միասնականացում և միջազգայնացում,
- դասախոսների և ուսումնառողների, գիտնական – հետազոտողների, ինչպես նաև արտաքին շահակիցների ստեղծագործական համագործակցություն,

- կառավարման նորարարական մոտեցումների կիրառում,
- ակադեմիական ազատությունների և համալսարանական ինքնավարության զարգացում,
- մտավոր սեփականության իրավունքի պահպանում,
- մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում և կառավարում:

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018-2022 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՇԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՂԵՆԻՇ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ և ՔԱՆԱԿԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Գործողություններ

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում դիմորդների ընդունելության կառավարչա-կազմակերպչական համակարգի կատարելագործում:
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի կրթական միջավայրի վերաբերյալ շահառուների շրջանում հարցումների պարբերաբար անցկացում, կարիքների բացահայտում, ակադեմիական միջավայրի արդիականացում:
- Որակյալ գիտահետազոտական ու ուսումնական գործընթացի կազմակերպման համար ռեսուրսների ընլայնում, արդյունավետ կրթական և հետազոտական միջավայրի ընդլայնում, կրթական և հետազոտական միջավայրից ուսանողների բավարարվածության աստիճանի բարձրացում:
- Արտաքին և ներքին կրթական միջավայրերի վերլուծություն՝ ԳԿՄԿ-ի մրցակցային առավելությունների և ներքին հնարավորությունների գնահատման նպատակով:
- ԳԿՄԿ-ի հեռավար ուսուցման համակարգի բաղադրիչների արդիականացում և կատարելագործում:
- Հեռավար ուսուցման ձևով ընդունելության պահանջարկի աճի խթանում, որակի կատարելագործում, տեխնիկական ներուժով հագեցում, լրացուցիչ և շարունակական կրթության ձևերի զարգացումը:
- ԳԿՄԿ-ի և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի միջև համագործակցության խորացում, էլեկտրոնային գրադարանների, համացանցային գիտական, տեղեկատվական աղբյուրների հետ ուսանողների և դասախոսների աշխատանքի հնարավորությունների ապահովում:
- ԳԿՄԿ-ում ուսումնառող համակազմի և պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմերի էլեկտրոնային բազայի կատարելագործում, պրոֆեսորադասախոսական և ուսումնառող համակազմերի էլեկտրոնային համապարփակ հաղորդակցության ապահովում:
- Երկրի զարգացման առաջնահերթություններից ելնելով՝ ԳԿՄԿ-ում ներմուծել հեռանկարային նոր մասնագիտություններ և/կամ մասնագիտացումներ, զարգացնել հանրային կապերը, կազմակերպել ԳԿՄԿ ներկայացումներ, ներգրավել

արտասահմանցիների, որոշ մասնագիտություններով իրականացնել անգլերեն կամ ռուսերեն ուսուցում, իրականացնել համատեղ կամ զուգահեռ կրթական ծրագրեր:

ՈՒՂԵՆԻՇ 2. ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գործողություններ

• Կրթական և հետազոտական մասնագիտական ծրագրերի իրականացում՝ երկրի հեռանկարային զարգացման տեսլականների հաշվառմամբ և որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխանեցմամբ:

• Մասնագիտական կրթական և շեշտադրված հետազոտական ծրագրերի /այսուհետ՝ ՄԿՀԾ/ շարունակական արդիականացում՝ Որակավորումների ազգային և Ոլորտային շրջանակների համապատասխան մակարդակների իրազեկություններին և գործատուների պահանջներին համապատասխան:

• Պետական կառավարման մարմինների և աշխատաշուկայի առաջնահերթություններից ելնելով՝ նոր մասնագիտությունների ցանկի ճշգրտում, օրենքով սահմանված կրթական ձևաչափերով ծրագրերի մշակում և իրականացում:

• ԳԿՄԿ-ում իրականացվող և նոր ստեղծվող ՄԿՀԾ-ների նոր մեթոդաբանությամբ մասնագրերի մշակում՝ կրթական և հետազոտական բաղադրիչների փոխկապվածության ու փոխլրացման հենքի շեշտադրմամբ:

• Հետազոտական և նորարարական, ստեղծագործական, վերլուծական և տեխնիկական բաղադրիչների հաշվառմամբ ամփոփիչ ատեստավորման գործընթացի շարունակական կատարելագործում, գնահատման չափանիշների կատարելագործում:

• Լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մշտադիտարկում՝ պահանջարկված դասընթացների ցանկը բացահայտելու և դրանց մշակումն ապահովելու նպատակով:

ՈՒՂԵՆԻՇ 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Գործողություններ

- Ժամանակակից տեխնիկական միջոցներով լսարանների, դահլիճների վերազինում և արդիականացում
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և ռեսուրսների կիրառման ընդլայնում կրթական և հետազոտական գործընթացներում

- Կենտրոնում գործող հեռավար ուսուցման էլեկտրոնային համակարգի զարգացում և կատարելագործում, առցանց եղանակով իրականացվող դասընթացների կանոնակարգում և ընդլայնում
- Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և հեռավար դասընթացների կազմակերպման համար
- Խրախուսման մեխանիզմների մշակում և ներդնում դասավանդման ընթացքում էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների հասանելիության ապահովում դասախոսների, ուսանողների և աշխատակիցների համար
- Կենտրոնի պաշտոնական կայքի կատարելագործում
- Կենտրոնի ներքին կառավարման էլեկտրոնային համակարգի կատարելագործում և զարգացում
- Էլեկտրոնային գիտական հանդեսներին բաժանորդագրության ապահովում
- Հեռավար ուսուցման կազմակերպում
- Էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու վերաբերյալ տարբեր մեթոդական ձեռնարկների, տեղեկատվական նյութերի, ուղեցույցների մշակում
- Հեռավար ուսուցման կազմակերպման շրջանակներում տպագիր, տեսա և ձայնային տեղեկատվական նյութերի թվայնացման կազմակերպում
- Կենտրոնի տեղեկատվական համակարգերի սերվերային պարկի արդիականացում
- Կենտրոնում առկա տեխնիկական միջոցների արդիականացում, ինչպես նաև ներքին համակարգչային օպտիկամանրաթելային, լարային և անլար ցանցի զարգացում և ընդլայնում
- Կենտրոնում SS ծառայությունների զարգացում և ընդլայնում:

ՈՒՂԵՆԻՇ 4. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գործողություններ

• Գիտահետազոտական գործընթացի կազմակերպման համար միջավայրի արդիականացում և կատարելագործում, հետազոտական արդյունքների ապրանքայնացման միտմամբ՝ հայեցակարգի մշակում:

• Հետազոտական գործունեության արդյունքների որակի և արդիականության գնահատման ցուցիչների հիմքով՝ լավագույն հետազոտող մագիստրոսներին և երիտասարդ գիտնականներին խրախուսման քաղաքականության կատարելագործում,

• Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և փոխառությունները /գրագողությունը/ կանխարգելող միջոցների կիրառման քաղաքականության կատարելագործում և անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերում:

• Ուսումնական և հետազոտական գործունեության առավել սերտացմանը նպաստող արդյունավետ մեխանիզմների ներդրում:

• ՀՀ Կառավարման համակարգի սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական և այլ առաջնահերթություններից բխող մագիստրոսական թեզերի և

գիտահետազոտական աշխատանքների ուղղորդված և արդյունավետ աշխատանքի կազմակերպում, առկա մեխանիզմների կատարելագործում:

- Գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող մեխանիզմների կատարելագործում:

- Գիտահետազոտական գործունեության ոլորտում համագործակցային կապերի ընդլայնում հանրապետական և արտերկրի առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, ձեռնարկությունների, գործարար համայնքի այլ կառույցների հետ, ինչպես նաև միջազգային հետազոտական նոր նախագծերին իրականացում՝ ուսանողական համակազմի ներգրավմամբ:

- Որակյալ ասպիրանտական կրթության համար անհրաժեշտ ակադեմիական, հետազոտական, մեթոդական, նյութատեխնիկական արդիական միջավայրի ապահովում:

- Կենտրոնի մասնագիտական ամբիոնների գիտական գործունեության որակի բարձրացում: Պատրաստվող մագիստրոսական ու ասպիրանտական թեզերի գիտական թեմաների բազմահայեցակետ դիտարկում, գիտական նորոյթի հանրայնացում, գիտահրատարակչական գործունեություն, ակադեմիական գիտական պարբերականների միասնական չափանիշների մշակում և ներդրում, պորտալի ստեղծում:

ՈՒՂԵՆԻՇ 5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գործողություններ

- Ուսանողների շրջանում մասնագիտական և հետազոտական միահյուսված գործունեությանը միտված համապարփակ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների շարունակական արդիականացում, ամրապնդում, պրակտիկաների միջոցով գործնականում կիրարկման հնարավորությունների ընդլայնում:

- Օտար լեզուներով հաղորդակցության խորացման և միջազգային ուսումնական հաստատությունների ու գիտակրթական կենտրոնների ուսանողներ հետ կապերի ու հետազոտական տիրույթում փորձի փոխանակման հնարավորությունների ընդլայնում:

- Ուսանողների շրջանում Գուգլ լսարան (Google Classroom) համակարգից օգտվելու գործընթացի մեկնարկ:

- Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, Երիտասարդ գիտնականների խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ընդլայնում, կամավորական աշխատանքների խրախուսում, գիտությամբ հետաքրքրված լավագույն ուսանողներին ուսումնառությունը շարունակելու և խրախուսման մեխանիզմների ընդլայնում:

- ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում առկա գիտական թեմաներում, միջազգային դրամաշնորհային ու միջազգային փորձի փոխանակման ծրագրերում ընդգրկվածության ապահովում, տեղեկատվական շտեմարանի ստեղծում, մշտապես թարմացում:

- Ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի խորացմամբ՝ ուսանողների հետազոտությունների արդյունքները տեղական և միջազգային

ռեյտիզավորված գիտական հանդեսներում տպագրության և հանրայնացման հնարավորությունների ընդլայնում, գիտությամբ զբաղվելու մոտիվացիայի ստեղծում:

- Սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ապահովում, Կենտրոնում հակակոռուպցիոն միջոցառումներում ուսանողական կառույցի դերի բարձրացում, շրջանավարտների ներգրավում՝ որպես մենթորներ և/կամ որպես գործատուներ:

ՈՒՂԵՆԻՇ 6. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գործողություններ

- Կենտրոնի կառավարման ճկունության և կանխատեսելիության ապահովում, հիմքում ունենալով ակադեմիական ազնվության և սոցիալական արդարության, որոշումների կայացման գործընթացում մասնակցայնության սկզբունքները:

- Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության իրական և ռացիոնալ բաշխման, արդյունավետ գործունեության ապահովում:

- Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության գործիքակազմի շարունակական կատարելագործում ու հանրայնացում, գործունեության արդյունքների գնահատման նոր մեխանիզմների կիրառում:

- Կենտրոնի ենթակառուցվածքների ու ռեսուրսների շարունակական բարելավում ու ընդլայնում:

- Ըստ ռազմավարական նպատակների՝ ֆինանսական պլանավորման ու հաշվետվողականության գործիքակազմի, կիրարկում, ֆինանսական միջոցներին համապատասխան Կենտրոնի զարգացման պլանավորման, կառավարման և մշտադիտարկմանը քաղաքականության և գործիքակազմի արդիականացում:

- Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունության պահպանում, փոխհատուցման և պարգևատրման համակարգերի կիրառում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում:

- Երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, միջազգային գրախոսվող գիտական պարբերականներում հետազոտությունների արդյունքների հրապարակման խրախուսում, վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարբերակված վարձատրության համակարգի մշակում և աստիճանական գործարկում:

- Թիմային աշխատանքի խրախուսում՝ աշխատակազմի համար միջոցառումների կազմակերպում, պարբերական վերապատրաստումներ, դասընթացների ու սեմինար-քննարկումների կազմակերպում:

ՈՒՂԵՆԻՇ 7. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գործողություններ

- ԳԿՄԿ-ի ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության արդիականացում, ֆինանսական կայունության ապահովում՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով:

- 4. Այլընտրանքային ֆինանսավորման հոսքերին նպաստող գործունեության արդիականացում /կրթական ծառայությունների մատուցում, դրամաշնորհային ծրագրերի իրականացում և այլն/:

- Կենտրոնի հնարավորությունների սահմաններում ԳԿՄԿ-ի եկամուտների, և այլ աղբյուրների հաշվին սոցիալապես անապահով ուսանողների ուսման նպաստների տրամադրում, ինչպես նաև աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսում, թե՛ ԳԿՄԿ-ի բյուջեի և թե՛ արհեստակցական միության միջոցների հաշվին:

- ԳԿՄԿ-ում առկա նյութատեխնիկական բազայի պահպանում և ընդլայնում, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, ուսումնական և գիտահետազոտական պահանջներին համահունչ՝ տեղեկատվական ժամանակակից տեխնիկական միջոցներով համալրում և արդիականացում:

- Ուսումնական և հետազոտական պրակտիկաների բազայի ընդլայնում :

- Էլեկտրոնային հաշվապահության ծրագրի ներդրում:

- Ներքին էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործում և զարգացում:

- Նոր կրթական ծառայությունների մշակում և մատուցում՝ հիմնված հանրային պահանջի վրա /հարցումներ, ուսումնասիրություն, շարունակական կրթություն, վերապատրաստումներ.../:

ՈՒՂԵՆԻՇ 8. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գործողություններ

- Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում:

- Արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակման խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում, մասնակցություն միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին:

- Միջազգային ծրագրերում ԳԿՄԿ-ի մասնակցության ընդլայնում, եվրոպական գիտակրթական տարածքին Կենտրոնի ինտեգրման ամբողջականացում, Կենտրոնի միջազգայնացում:

- Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում:

- Ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում:

- Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում:

- Հեռավար ձևաչափով օտարալեզու դասընթացների մշակում, փորձարկում և կիրառում:

ՈՒՂԵՆԻՇ 9. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Գործողություններ

- Պետական կառավարման տարբեր ոլորտներում, ինչպես նաև հանրության տարբեր շերտերի կրթական կարիքների ուսումնասիրում, դրանց համապատասխան լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի առաջարկում:

- Կենտրոնի աշխատակիցների և սովորողների սոցիալական կարիքների հետազոտություն և անհրաժեշտության դեպքում՝ օժանդակության ցուցաբերում:

- Աշխատակիցների պարզևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևերի կիրառում:

- Ներառական կրթական միջավայրի ստեղծում, հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիության ապահովում:

- Կենտրոնի ներքին շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, գործընկերների հետ արդյունավետ համագործակցության ապահովում:

- Կենտրոնի գործունեության և կրթական ծառայությունների պատշաճ ներկայացում զանգվածային լրատվության միջոցների և համացանցի միջոցով, հանրությանը հավաստի տեղեկատվության մատուցում:

- Հանրության հետ Կենտրոնի կապերի ակտիվացում, սոցիալական կյանքի ամենատարբեր ոլորտների հետ գործընկերային հարաբերությունների ստեղծում:

- «Գործատու-Կենտրոն» բազմաբնույթ համագործակցության ապահովում, գործընկերների ցանկի ընդլայնում:

ՈՒՂԵՆԻՇ 10. ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ և ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

Գործողություններ

- Որակի ներքին ապահովման գործընթացների քաղաքականության, թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում:

- Բարելավման միջոցառումների իրականացում՝ հիմնված գնահատման արդյունքների վրա:

- Շահակիցների հետ բաց երկխոսությունների, նրանց ներգրավվածության ապահովում:

- Նախապատրաստում է ԳԿՄԿ-ին ՈԱԱԿ-ին արտաքին գնահատման համար:

- Կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում և արդիականացում, արդյունքների, վերլուծությունների հրապարակում, շահակիցների ներգրավմամբ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում և ամբողջականացում:
- Կոռուպցիոն վտանգների բացահայտում և կանխում՝ ուսումնական գործընթացի բոլոր փուլերում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կանխատեսում, օբյեկտիվ գնահատում և դրանց նվազեցմանն ու հաղթահարմանը ուղղված միջոցների ձեռնարկում:
- Ակադեմիական ազնվության նորմերի և բարեվարքության կանոնների արմատավորում:
- Կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում, կոռուպցիայից զերծ կրթական միջավայրի ապահովում:
- Կենտրոնի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, որոշումների ու հրամանների հստակ կատարում:
- Կենտրոնի ուղղահայաց՝ վերևից ներքև և ներքևից վերև, ինչպես նաև հորիզոնական ուղղություններով համագործակցության, հաշվետվողականության և վերահսկողության կառուցակարգերի կատարելագործում:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված գործառույթների իրականացում:
- Կենտրոնի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրագործման կամքի, վճռականության ու պատրաստակամության դրսևորում:
- Ուանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն, հակակոռուպցիոն միջոցառումների մասնակցային իրագործում և դրանց արդյունավետության ապահովում: